



Co-funded by the
Erasmus+ Programme
of the European Union



ERASMUS+ CBHE PROJECT # 585760-EPP-1-2017-1-AM-EPPKA2-CBHE-JP

“Change in Classroom: Promoting Innovative Teaching & Learning to Enhance Student Learning Experience in Eastern Partnership Countries”, PRINTeL

ԶԵԿՈՒՅՑ

ERASMUS+ PRINTeL նախագծի մասնակից ՎՊՀ դասախոսների կողմից
կիրառված ՏՏ գործիքների եւ դասավանդման ժամանակակից մեթոդների
վերաբերյալ հարցումների արդյունքների ուսումնասիրության

Վանաձոր- 2020

Բովանդակություն

Ներածություն. ընդհանուր տեղեկություններ3

Հարցումների արդյունքների վերլուծություն Error! Bookmark not defined.

Եզրակացություն..... Error! Bookmark not defined.

Հետազոտ անելիքների ուղենիշներ Error! Bookmark not defined.

Ներածություն. ընդհանուր տեղեկություններ

Զեկույցը կազմվել է ERASMUS+ ծրագրի PRINTeL նախագծի շրջանակում: Այն ամփոփում է PRINTeL նախագծի գործընկեր ԵՄ բուհերում վերապատրաստված ՎՊՀ դասախոսների կողմից յուրացված ժամանակակից մեթոդների ու SS գործիքների միջոցով ուսանողներին դասավանդելու արդյունավետության գնահատման վերաբերյալ հարցման արդյունքների ուսումնասիրությունը:

Զեկույցի նպատակներն են եղել հարցման արդյունքների վերլուծության միջոցով վերհանել ժամանակակից մեթոդների և SS գործիքների տեղայնացման հնարավորությունները, մատչելիության, հասանելիության խնդիրները, գնահատել դասապրոցեսի՝ որպես հաղորդակցական դաշտի համագործակցային հնարավորությունների, ուսանողության շրջանում հետաքրքրության, ինքնուրույնության, ժամանակի առավել արդյունավետ կիրառման, միավոր ժամանակում ավելի մեծ ծավալով տեղեկատվության հետ աշխատելու արդյունավետությունը: Զեկույցում ներկայացված են նաև բացահայտված խնդիրները՝ հետագա անելիքների ուղենշման տեսանկյունից: Ներկայացված նպատակներն իրագործելու համար առանձնացվել են հետևյալ խնդիրները.

- Պարզել ավանդական դասապրոցեսի համեմատ SS գործիքների և դասավանդման ժամանակակից մեթոդների կիրառման դեպքում ուսանողների՝
 - ✓ դասին մասնակցության չափի և փոխազդեցության խթանման հնարավորությունները,
 - ✓ թեմայի նկատմամբ հետաքրքրության աճի խթանման հնարավորությունները,
 - ✓ ժամանակի առավել ռացիոնալ տնօրինման հնարավորությունները,
 - ✓ թեմայի մատուցման բազմաձևության միաժամանակյա տրամադրման հնարավորությունները,
 - ✓ նյութի կիրառելիության հնարավորությունները,
 - ✓ ստեղծագործականությունը,
 - ✓ ինքնուրույնության խթանումը,
 - ✓ ընդհանուր բավարարվածությունը դասապրոցեսից:
- Հավաքագրել և ամփոփել ուսանողների առաջարկությունները դասապրոցեսում SS գործիքների և դասավանդման ժամանակակից մեթոդների կիրառման հետ կապված առավելությունների և թերությունների ընդգծման տեսանկյունից:

Հարցումն իրականացվել է ՎՊՀ Շարունակական կենտրոնի բովանդակային, մեթոդական և տեխնիկական աջակցությամբ: Հարցաթերթը մշակվել է կենտրոնի կողմից, հարցման անցկացումը կազմակերպվել է վերապատրաստում անցած դասախոսների աջակցությամբ՝ 2020թ. մարտ-ապրիլ ամիսների ընթացքում, առցանց եղանակով:

Հարցումներին մասնակցել է գործող 5 ֆակուլտետների 99 ուսանող (86 բակալավր, 13 մագիստրոս), որոնց դասավանդել են վերապատրաստում անցած դասախոսները՝ կիրառելով դասավանդման նորագույն մեթոդներ և SS գործիքներ: Գլխավոր համախմբությունը կազմել է 130 ուսանող: Ընտրանքային համախմբության որոշման ժամանակ որպես չափանիշ ընտրվել է առաջադիմությունը, մասնագիտության ուղղվածությունը (բնագիտական, հասարակագիտական, հումանիտար), որակավորման աստիճանը. Իրականացվել է ստրատիֆիկացված ընտրանք: Վստահելիության շեմը կազմում է 95%:


Հարցման արդյունքների վերլուծություն

Արդյունքները ամփոփվել են են ըստ հարցաթերթի հիմնական հարցերի:

Առաջին հարց՝ «Որքանո՞վ է մատուցվող թեման հետաքրքրանում նորագույն տեղեկատվական տեխնոլոգիաների կիրառման դեպքում ավանդական դասի համեմատ»: Հարցվածների մեծամասնությունը (46%) պատասխանել է 81% -100%, հարցվողների 29%-ը պատասխանել է 61-80%, հարցվողների 4% -ը պատասխանել է 41% -60%, հարցվողների 10% -ը պատասխանել է 20%-40% , իսկ 3% -ը պատասխանել է, որ հետաքրքրության աճի առումով որևէ փոփոխություն չեն նկատել: Հարցվածների 7% -ը դժվարացել է պատասխանել հարցին (*տե՛ս գծապատկեր 1*):

Պատասխաններից ելնելով կարող ենք փաստել, որ դասավանդման նորարարական մեթոդների և SS գործիքների օգտագործումը իսկապես դասերը հետաքրքիր է դարձնում:


Գծապատկեր 1



Երկրորդ հարց՝ «Որքանո՞վ է մատուցվող թեման հասկանալի/մատչելի/ դառնում նորագույն տեղեկատվական տեխնոլոգիաների կիրառման դեպքում ավանդական դասի համեմատ»: Հարցվողների մեծ մասը (62%) պատասխանել է 81% -100%, հարցվողների 16%-ը պատասխանել է 61%-80%, հարցվողների 10%-ը պատասխանել է 41%-60%, հարցվողների 8%-ը պատասխանել է, որ չի նկատել որևէ փոփոխություն մատչելիության աճի տեսանկյունից, և հարցված ուսանողների 4%-ը պատասխանել է մինչև 40% (*տե՛ս գծապատկեր 2*):

Այսպիսով, կարող ենք ասել, որ հարցմանը մասնակցած ուսանողների մեծամասնությունը նախընտրում է նորարարական մեթոդների և SS գործիքների օգտագործումը, քանի որ տրամադրվող թեման ավելի հասկանալի և հասանելի է դառնում:


Գծապատկեր 2



Երրորդ հարց՝ «Որքանո՞վ է մատուցվող թեմայի կիրառելիությունը ակնհայտ դառնում նորագույն տեղեկատվական տեխնոլոգիաների օգտագործման դեպքում ավանդական դասի համեմատ»: Հարցվածների մեծամասնությունը (49%) պատասխանել է 81% -100%, և հարցվողների 31% -ը պատասխանել է 61% -80%: 20% -40% և 41%-60% պատասխանները հավասար են (6% և 6%): Ուսանողների 6% -ը պատասխանել է, որ կիրառման տեսանկյունից որևէ փոփոխություն չեն նկատել, և ուսանողների փոքր թվաքանակը (1%) պատասխանել է մինչև 20%(տե՛ս գծապատկեր 3):

Մտացված արդյունքները օգնում են մեզ եզրակացնել, որ հարցվողների համար տրամադրվող թեմայի կիրառելիությունը առավել հասկանալի, ընկալելի է դառնում նորարարական մեթոդների և SS գործիքների կիրառման պարագայում:


Գծապատկեր 3



Չորրորդ հարց՝ «Որքանով է խթանվում ստեղծարարությունը նորագույն տեղեկատվական տեխնոլոգիաների օգտագործման դեպքում ավանդական դասի համեմատ»: Հարցմանը մասնակցած ուսանողների մեծամասնությունը (58%) պատասխանել է 81-100%, հարցվողների 23%-ը պատասխանել է 61-80%, հարցվողների 8%-ը պատասխանել է 41-60%, միայն 2% -ը պատասխանել է 20-40%, մոտ 5 %-ը պատասխանել է, որ ստեղծագործական խթանման առումով որևէ փոփոխություն չի նկատել(տե՛ս գծապատկեր 4):

Կարող ենք եզրակացնել, որ տեղեկատվական տեխնոլոգիաների օգնությամբ դասի կազմակերպումը կարող է խթանել ստեղծագործական ունակությունը ուսանողների մոտ:


Գծապատկեր 4



Հինգերորդ հարց՝ «Որքանո՞վ է խթանվում ինքնուրույնությունը նորագույն տեղեկատվական տեխնոլոգիաների օգտագործման դեպքում ավանդական դասի համեմատ»: Հարցվածների մեծամասնությունը (49%) պատասխանել է 81% -100%: Հարցվածների ևս 30% -ը պատասխանել է 61% -80%: 6% -ը պատասխանել է, որ իրենք որևէ փոփոխություն չեն նկատել անկախության խթանման հարցում: Հարցվողների շատ քիչ տոկոսն էլ (2%) դժվարացել է պատասխանել այդ հարցին(տե՛ս գծապատկեր 5):

Այսպիսով, կարելի է եզրակացնել, որ դասավանդման ընթացքում ժամանակակից տեխնոլոգիաների օգտագործումը կարող է խթանել ուսանողի ինքնուրույնությունը:


Գծապատկեր 5



Վեցերորդ հարց՝ «Որքանո՞վ է խթանվում ուշադրության կենտրոնացումը նորագույն տեղեկատվական տեխնոլոգիաների օգտագործման դեպքում ավանդական դասի համեմատ»: Հարցվածների մեծամասնությունը 58%-ը պատասխանել է 81-100%, պատասխանների 61%-80% -ը կազմել է 20%, հարցմանը մասնակցած ուսանողների 10% -ը պատասխանել է 41-60% : Հարցվածների 4% -ը պատասխանել է, որ կենտրոնացման առումով փոփոխություններ չեն նկատել(տե՛ս գծապատկեր 6):

Ստացված արդյունքներից ելնելով՝ կարող ենք հանգել այն եզրակացության, որ դասավանդման ընթացքում ժամանակակից տեխնոլոգիաների օգտագործումը խթանում է ուշադրության կենտրոնացումը:


Գծապատկեր 6



Յոթերորդ հարցը՝ «Որքանով է խթանվում երևակայությունը նորագույն տեղեկատվական տեխնոլոգիաների օգտագործման դեպքում ավանդական դասի համեմատ»: Հարցվածների մեծամասնությունը (50%) պատասխանել է 81% -100%, հարցմանը մասնակցած ուսանողների 30%-ը պատասխանել է 61%-80%, նույն թվով ուսանողներ (6%) պատասխանել են համապատասխանաբար 41% -60% և 21% -40%: Հարցմանը մասնակցած քիչ ուսանողներ պատասխանել են, որ չեն նկատել որևէ փոփոխություն երևակայության խթանման առումով (1%): Հարցվածների շուրջ 4% -ը դժվարացել է պատասխանել տվյալ հարցին(տե՛ս գծապատկեր 7):

Այսպիսով կարող ենք փաստել, որ երևակայությունը խթանելու տեսանկյունից նորարարական մեթոդների և SS գործիքների օգտագործումը նախընտրելի է ավանդական դասերի համեմատությամբ:


Գծապատկեր 7



Ութերորդ հարց՝ «Որքանով է խթանվում լսարանի ընդհանուր ակտիվությունը նորագույն տեղեկատվական տեխնոլոգիաների օգտագործման դեպքում ավանդական դասի համեմատ»: Հարցվածների 45%-ը պատասխանել է 81% -100%, մինչդեռ հարցվողների 30%-ն էլ պատասխանել է 61% -80%: Հարցվածների 10% -ը պատասխանել է 41% -60%: Հարցված ուսանողների 3%-ը պատասխանել է մինչև 20%, իսկ 6%-ը՝ 20% -40%: Հարցվածներից 1%-ը պատասխանել են, որ իրենք չեն նկատել որևէ փոփոխություն լսարանի ընդհանուր ակտիվությունը խթանելու առումով(տե՛ս գծապատկեր 8):

Արդյունքում հարցվողների մեծամասնությունը կարծում է, որ լսարանի ընդհանուր ակտիվությունն ավելի է խթանում նորագույն տեղեկատվական տեխնոլոգիաների օգտագործմամբ, եթե համեմատենք ավանդական դասի հետ:


Գծապատկեր 8



Իններորդ հարց՝ «Որքանո՞վ է խթանվում կուրսեցիների հետ համագործակցությունը նորագույն տեղեկատվական տեխնոլոգիաների օգտագործման դեպքում ավանդական դասի համեմատ»: Հարցվածների մեծամասնությունը (46%) պատասխանել է 81%-100%, հարցվածների 30%-ը պատասխանել է 61%-80%, հարցվողների 9%-ը պատասխանել է 41%-60%, հարցմանը մասնակցած ուսանողների 7%-ը պատասխանել է 20%-40%: Հարցվածների 3%-ը դժվարացել է պատասխանել հարցին: Հարցվածների մի փոքր մասը (5%) պատասխանել է, որ համագործակցության տեսանկյունից որևէ փոփոխություն չեն նկատել(տե՛ս գծապատկեր 9):


Հարցի վերաբերյալ ստացված արդյունքներն ամփոփելով կարող ենք ասել, որ ժամանակակից տեխնոլոգիաների և դասավանդման նորարարական մեթոդների օգտագործումը նպաստում է համագործակցության աճին ուսանողների միջև:

Գծապատկեր 9



Տասներորդ հարց՝ «Որքանով է խթանվում դասախոսի հետ համագործակցությունը նորագույն տեղեկատվական տեխնոլոգիաների օգտագործման դեպքում ավանդական դասի համեմատ»: Հարցվածների մեծամասնությունը (59%) տվել է 81%-100% պատասխանը, հարցվողների 19%-ը պատասխանել է 61%-80%, հարցմանը մասնակցած ուսանողների 11%-ը պատասխանել է 41%-60%: Հարցվածների 7%-ը պատասխանել է, որ համագործակցության խթանման առումով որևէ փոփոխություն չեն նկատել: Հարցմանը մասնակցած ուսանողների 3%-ը պատասխանել է մինչև 20% (տե՛ս գծապատկեր 10):


Գծապատկեր 10



Տասնմեկերորդ հարց՝ «Գնահատե՛ք դասին ժամանակի տնօրինման հնարավորությունները տեղեկատվական տեխնոլոգիաների կիրառման պայմաններում ավանդական դասի համեմատ»: Հարցվածների 72% -ը պատասխանել է, որ ավելի շատ տեղեկատվություն է ստանում՝ համեմատած ուսուցման ավանդական ձևի հետ: Հարցվածների միայն 7% -ն է պատասխանել, որ ավելի քիչ տեղեկատվություն է ստացել ուսուցման ավանդական ձևի համեմատ: Հարցվածների 17% -ը պատասխանել է, որ իրենք որևէ փոփոխություն չեն նկատել դասավանդման ավանդական ձևի համեմատ: Հարցվածների 4%-ը դժվարացել է պատասխանել հարցին(տե՛ս գծապատկեր 11):

Հիմք ընդունելով հարցմանը մասնակցածների մեծամասնության կարծիքը՝ կարող ենք փաստել, որ ժամանակակից տեխնոլոգիաների օգտագործումը նպաստում է ավելի հազեցած տեղեկատվության փոխանցմանը:


Գծապատկեր 11



Տասներկուերորդ հարց՝ «Ցանկանո՞ւմ եք, որ ավելի շատ դասեր անցկացվեն նորագույն տեղեկատվական տեխնոլոգիաների կիրառմամբ»: Հարցվածների 89% -ը պատասխանել է, որ ցանկանում է,և 6% հարցվողներ պատասխանել են, որ դժվարանում են պատասխանել այդ հարցին: Ուսանողների միայն 5%-ը չի ցանկանում, որ ավելի շատ դասեր անցկացվեն ժամանակակից մեթոդների և ՏՏ գործիքների կիրառմամբ(տե՛ս գծապատկեր 12):

Այսպիսով, նորարարական մեթոդներն ու ՏՏ գործիքները, անկասկած, պետք է լինեն ցանկացած դասի կարևոր բաղադրիչ:

Գծապատկեր 12



Եզրակացություն

Հաշվի առնելով հարցման արդյունքները և ուսանողների կողմից արված առաջարկությունները, կարող ենք եզրակացնել, որ լսարանում տեղեկատվական տեխնոլոգիաների գործիքների, դասավանդման նոր մեթոդների օգտագործումը դրական է անդրադառնում ուսուցման գործընթացի վրա: Այն հնարավորություն է տալիս ավելի հեշտությամբ հասկանալ թեման, լինել առավել ստեղծագործ, համագործակցել համակուրսեցիների և դասախոսների հետ, հնարավորինս ռացիոնալ օգտագործել ժամանակը, խթանել մասնակցությունը, կենտրոնացնել ուշադրությունը: Նոր մեթոդներն ու գործիքները հնարավորություն են տալիս ուսանողներին ավելի երկար ժամանակ լինել կենտրոնացած (ուսանողների հետաքրքրությունը, կենտրոնացվածությունը ավելի երկար է պահպանվում գրաֆիկայի, տեսանյութերի միջոցով), ինչը խոստանում է առավել լուրջ ակադեմիական հաջողություններ դասապրոցեսի ավանդական կազմակերպման համեմատ: Դասախոսներն ու ուսանողները անկախ են ուսումնական տեսանյութեր ստեղծելու և իրական ժամանակում կարծիքներ հաղորդելու տեսանկյունից, ինչը նպաստում է դասախոսների հետ համագործակցային հաղորդակցման ոճի ամրապնդմանը, ուսանողների ինքնուրույնությանը:

Առաջարկություններում ուսանողների կողմից բարձրացված խնդիրները վերաբերում են լսարանի՝ որպես նորարարական գործիքներին և մեթոդներին հարմարեցված միջավայրի վերադասավորմանը: Ավանդական դասը չի համապատասխանում, չի արձագանքում ուսանողների մոտ առաջացած նոր պահանջներին: Որոշ առաջարկներ ուղղված են ավելի փոքր խմբերում աշխատանքը կազմակերպելուն: Այս երկու խնդիրներն էլ համալսարանի համար պահանջում են լրացուցիչ ծախսեր, և անհրաժեշտ են համապատասխան ֆինանսական հաշվարկներ և քննարկումներ: Առաջարկություններում ուսանողները շեշտում են նաև հազեցվածության հարցը: Մի դասի ընթացքում մի քանի գործիքների միաժամանակ օգտագործումը նրանց շփոթեցնում է: Ուստի անհրաժեշտ է, որ դասախոսները ընտրեն հիմնական գործիքը, կոնկրետ մեթոդների համախումբը, որոնք նրանք համարում են առավել արդյունավետ տվյալ դասի համար:

Ուսանողների հավաստմամբ նորարարական մեթոդներով և SS գործիքների միջնորդությամբ անցկացրած դասն առավել հետաքրքիր և արդյունավետ է ընթանում, ինչը խթանում է նրանց բավարարվածության աճը դասապրոցեսից:

Հետագա անելիքների ուղենիշներ

Զեկույցի շրջանակներում հարցման ամփոփված արդյունքների, կատարված վերլուծության ու եզրակացությունների արդյունքում կարելի է առանձնացնել հետագա անելիքների հետևյալ ուղենիշները.

- ✓ Հիմք ընդունելով ուսանողների բավարարվածության մակարդակը, դասավանդման ժամանակակից մեթոդների և SS գործիքների դեպքում հետաքրքրության, ուշադրության, ինքնուրույնության, ստեղծագործականության խթանման փաստը՝ առաջարկում ենք շարունակել բուհի պրոֆեսորադասախոսական կազմի վերապատրաստումը արդեն իսկ վերապատրաստում անցած դասախոսների անմիջական օժանդակությամբ:
- ✓ Կարևորում ենք նաև ուսանողների համար համապատասխան ուղեցույցների մշակումը կոնկրետ գործիքներից օգտվելու հմտություններ ձեռքբերելու նպատակով, ինչը քննարկման թեմա է և խրախուսում է ենթադրում:
- ✓ Անհրաժեշտ ենք համարում նորարական մարտահրավերներին համապատասխան վերազինել որոշ լսարաններ՝ հաշվի առնելով բուհի ֆինանսատնտեսական հնարավորությունները:
- ✓ Դասավանդման նոր մեթոդների և գործիքների տիրապետումը և կիրառումը ենթադրում է նաև դասընթացների ուսումնամեթոդական փաթեթներում համապատասխան փոփոխությունների իրականացում:
- ✓ Կոնկրետ մեթոդներին և գործիքներին տիրապետելը մոտ ապագայում կարող է դասախոսի ընտրության չափանիշների ցանկում իր արդարացված տեղը գտնել, ինչը համապատասխան կարգի վերանայման անհրաժեշտություն է առաջացնում: